

ղեստինագէտները առարկելի մասեր մատնանշեն, սակայն ան իր հիմքին մէջ իրականութենէ դուրս չի կրնար նկատուիլ: Երուսաղէմի եւ շրջակայից մէջ երեւան եկած հայկական արձանագրութիւններ, մոզայիքներ և աւերեալ հայ վանքերու հատակոտոր յիշատակարանները յոյս կը ներշնչեն թէ օր մը թեւրեւս կարելի ըլլայ վերականգնել Անաստաս վրդ.ի վանօրէից ցուցակը՝ իր գլխաւոր զիծերուն մէջ (*):

Գիտունները Կեդրոնի Ձորին մէջ «Գերեզման Ս. Յակոբայ» անուամբ ճանչցուած յիշատակարանի մասին տարբեր բացատրութիւններ կու տան: Ան բոլորովին տարբեր է Յովսափատի Ս. Տեառնեղբոր վկայարանէն: Նոյն յիշատակարանին ճակատը փորուած է ժայռին մէջ. ծոփօրի մը (frise) հետ կառուցուած է չորս փոքր սիւներով, եւ ունի անդաստակ մը. որ կը տանի դէպի գերեզմանական չորս սենեակներ՝ որոնց իւրաքանչիւրը կը բովանդակէ բազմաթիւ խուցեր: Այս գերեզմանին Ս. Յակոբ աւուունը տրուած է աւանդութեան մը համաձայն, որպէս թէ Առաքեալը հոն ապաստանած էր Քրիստոսի չարչարանաց ժամանակ և հոն թաղուած էր իր մարտիրոսութենէ վերջ: Յիշատակարանը ծածկուած է երբայական արձանագրութիւններով: Վերջնոցս մէջ գտնուած աւելի հին արձանագրութիւն մը քովթարի մը (architrave) վրայ քանդակուած՝ ցոյց կու տայ թէ այս գերեզմանը Պէնի-Հէզիրներու (Beni-Hésir) քահանայապետական ընտանիքի մը ութը անդամոց կը վերաբերի: Իսլամները այս գերեզմանը կը կոչեն Տիւփանը-Ֆարաուն (Տե'ս Dict. de la Bible, P. Vigourouxի բառն Tombeau):

Յովսափատի Ս. Տեառնեղբայրը հետեւեալ կերպով կը յիշուի նոյն Անաստաս վարդապետի ցուցակին մէջ. «Սահառունեաց վանքըն, զոր Քարուփսնի կոչեն, որ Տեառնեղբորն է, զոր ընկալաւ վէմն»: Որո՞նք են Սահառունիք.— Սահառունիք կը նկատուի հայ նախարարութիւններէն մին, որուն ծագումը շատ յայտնի չէ:

Ան Ս. Սահակի գահամակին մէջ ԻԵ. կարգն ունի: Չորրորդ

(*) Անաստաս պատմական անձ մըն է, որ երուսաղէմ գալով կը ցուցակագրէ այն հայ վանքերը, որ գոյութիւն ունէին նոյն դարուն, հայ իշխանի մը խնդրանաց համաձայն: